18 **Դ.** *Աշխարհ Ասիո[յ]՝ Լիկիա, [յելից կալով [Առանձնակ] Ասիոյ][1], որոյ մայրաքաղաք է զՄիռ*ⁿ*իա[2]:* 19 *Ունի լերինս երկուս[3] եւ գետս երիս[4] եւ կղզի[ս հինգ, յորոց][5] զՌոդոս[6]՝ հոմանուն պեղագոսին:* 20 *Լինի անդ խունկ զուկին [եւ տրատէ][7], զոր Հայք «արուս» կոչեն, ի ծառո[յ] ծորելոյ [որպէս զխիժ լոյծ][8], որպէս մեղր կամ մրուր թանձր:*

21 **Ե.** *Բնաշխարհ Ասիո[յ] Փռիգիա[9] է, յելից կալով Առանձնակն Ասիո[յ] եւ յերի Լիկիոյ:* 22 *Ունի յինքեան աշխարհս երիս[10]՝ զՊիսիդեա[11], յորում՝ մայրաքաղաքն Անտիոք եւ այլ քաղաքս քսան եւ վեց[12], յորոց մի՞՝ որ[13] կոչի Կիւ[ո]տոս[14], ա՛յս[15] տեղի տապանին Նոյի շինելոյ[16] (եթէ՞[17] առասպել է, եւ եթէ՞ ճշմարիտ՝ ո՛չ գիտեմ), եւ Պակատիանի, յորում՝ մայրաքաղաք Լաւոդիկէ եւ այլ քաղաքս քառասուն[18], եւ Սաղուտարիս[19], յորում մայրաքաղաք է Սիւն[ն]ադա[20] եւ այլ քաղաքս երեսուն[21]:* 23 *Եւ ունի [Փռիւգիա լեառն՝ զԴիդիմոն[22], եւ գետս հինգ. [եւ ունի]][23] լիճս երեքտասան[24] [եւ դաշտս մեծամեծս][25]:*

24 **Զ.** *Աշխարհ [Ոնոռիատ[26]՝ յելից կալով Բիւթանիոյ, առ երի Փռիւգիոյ մինչեւ ցՊոնտոսի ծովն:* 25 *Ունի Ոնոռիա[տ][27] մայրաքաղաք զԿղաւդիուպաւլիս[28], ընդ որով[29] եւ այլ եւս քաղաքս հինգ:* 26 *Եւ գետ ունի զՊառթենոս զերեքարմատեան[30]. յայսմ աղբեւր երդնուին դեւքն վասն անչափ ցրտութեանն[31]:*

27 **Է.** *Աշխարհ]*[32] *Պ[ա]մփ[իլ]ագոնիա[33]՝ յելից կալով Ոնոռ[ի]ա[18ա]տա[յ][34] աշխարհի, առ երի ծովուն Պոնտոսի, որ կոչի Պոնտոս Գաղատական:* 28 *Ունի գետս [զ]Զալիքոս[35] եւ զԱղիս[36],*

---

1 *VS չիք* յելից կալով ... Ասիայ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս* Լիկ**իա** ... Աս**իոյ**/Աս**իայ**)

2 *V* զմիռնիա *[**ի**-ի տակ ուշ ձեռքով՝* **ւ***]*, *S* Զմիւռնիա *[ըստ համառօտի] փխ* զՄիռⁿիա *(վեր. Патк. եւ Երեմեանի՝ ըստ Պտղոմէոսի՝* Μύρα. *լուսանցքում ուշ ձեռքով 2 տող ծնթ. կայ՝* «որ է յապամի/այ»*)*

3 *V* բ̄

4 *V* գ̄, *S* չորս *փխ* երիս *(վեր., նոյնը՝ եւ համառ-ում)*

5 *VS* կղզի *փխ* կղզի[ս հինգ, յորոց] *(վեր. Երեմ-նի)*

6 *V* զՌադոս *փխ* զՌոդոս *(վեր. Սուքր-ի՝ ըստ Ա.8)*

7 *VS չիք* եւ տրատէ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառ.)*

8 *VS չիք* որպէս զխիժ լոյծ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս* ծորել**ոյ** ... **լ**ոյծ*)*

9 *S* Փռիւգիա *փխ* Փռիգիա *(V. հմմտ. Բ.5, Ե.30, 33)*

10 *V* գ̄, *S* երեք *փխ* երիս *(վեր.)*

11 *S* զՊիսիդիա *փխ* զՊիսիդեա *(V)*

12 *V* ի̄զ̄ *(ըստ Երեմեանի՝ վեր-լի է՝* քսան եւ **մէկ***)*

13 *S* մին *փխ* մի°՝ որ *(V. անսովոր* **օ(աւ)***-ի փխն. Երեմեանը վերակ-նում է* «մին [Ապամեա], որ»*)*

14 *V* Կիւտոս *փխ* Կիւոտոս *(վեր. Սուքրեանի. Պտղոմէոսի մօտ* Ἀπάμεια Κιβωτός *է)*

15 *S* այսինքն *փխ* ա՛յս *(V. շեշտը, հէնց գրչինն է)*

16 *Լուսանցքում ուշ ձեռքով ծնթ.՝* «տա/պա/ն Նոյի»

17 *S* եւ եթէ *փխ* եթէ *(V)*

18 *V* խ̄ *(ըստ Երեմեանի՝ վերականգնելի է՝* քսան եւ **երկու**՝ *ըստ Պտղոմէոսի,* ի̄բ̄ *փխն.* խ̄*)*

19 *V* Սաղատարիա *փխ* Սաղուտարիս *(վեր. Սուքր. (ըստ Բ.5)՝* «Յօր. *Սաղատարիա.* այն է Phrygia Salutaris, եւ Phrygia Pacatiana կամ Capatiana» *ծնթ-մբ. համառ-ում՝* Սաղուտարիա *եւ* Մաղատարիա*)*

20 *V* Միւնուղա *փխ* Սիւննադա *(վեր. Սուքրեանի՝* «Յօր. *Միւնուղա» ծնթ-մբ. Պտղոմէոսի՝* Σύνναδα*)*

21 *V* լ̄ *(ըստ Երեմեանի՝ վերականգնելի է՝* **քսան***)*

22 *AE* զԴիդոն, *Dv²* զԴիդոնիա *փխ* զԴիդիմոն *(Pv. Երեմեանը վեր-նում է* զԴի[ն]դիմոն՝ *ըստ Պտղ.)*

23 *VS չիք* Փռիւգիա ... հինգ. [եւ ունի] *(1 տող) (վեր.՝ ըստ Երեմ.՝ համառ-ից. տե՛ս* **Եւ ունի** ... **եւ ունի***)*

24 *V* ժ̄գ̄ *(գուցէ, վերականգնելի է* երեքտասան լիճս*)*

25 *VS չիք* եւ դաշտս մեծամեծս *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս* ժ̄գ̄ լի**ճս** ... մեծամե**ծս***)*

26 *A* Ոնոռիա, *DPv* Ոնորիա *փխ* Ոնոռիատ *(E)*

27 *ADE* Ոնոռիա, *Pv* Ոնորիա *փխ* Ոնոռիա[տ] *(վեր.)*

28 *AE* Կղաւդիպաւլիս *փխ* զԿղաւդիուպաւլիս *(DPv)*

29 *DEPv* որով *փխ* որս *(A)*

30 *DPv* զՊարթենիոս երեքվտակեանն *փխ* զՊառթենոս զերեքարմատեան *(AE)*

31 *AE չիք* յայսմ աղբեւր ... ցրտութեանն *(1 տող) (DPv. տե՛ս* զերեքարմատ**եան** ... ցրտութ**եանն***)*

32 *VS չիք* Ոնորիա[տ]՝ յելից ... Աշխարհ *(7 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի՝ ներառեալ աշխարհահամարը. տե՛ս* **Աշխարհ** ... **Աշխարհ***)*

33 *V* Պեփագոնիա, *S* Պափղագոնիա *[ըստ համառօտի] փխ* Պ[ա]մփ[իլ]ագոնիա *(վեր.՝ ըստ յաջորդների, տե՛ս նախ. Ե.30, 46, հմմտ.* **մ** → **ն** → **ե***)*

34 *V* Ոնոռատա, *S* Ոնոռատայ *փխ* Ոնոռ[ի]ատա[յ] *(վեր. Երեմեանի. հմմտ. նախորդ գլխում եւ նախ. Բ.5. համառօտում* Ոնոռիա *եւ* Ոնորիատէ *է)*

35 *V* զոզիքոս, *S* Զալիքոս *[«Յօր. զՈզիքոս» ծնթ-մբ] փխ* [զ]Զալիքոս *(վեր.՝ ըստ Երեմեանի. տե՛ս բոլորագիր* **ալ** → **ոզ**. *Պտղոմէոսի մօտ՝* Ζαλήσκος*)*

36 *VS* զՈղիս *փխ* զԱղիս *(վեր.՝ ըստ Երեմեանի. հմմտ. նախ. Ե.51 եւ տե՛ս բոլորագիր* **աղ** → **ող**. *Պտղոմէոսի մօտ* Ἅλυος *է, իմա՛ Հալիս)*